Հավելված 6
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/05* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/05-1

ք. Բերդ «23» մարտի 2021 թ.

«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ ի դեմս տնօրենի ժ/պ Արմեն Գալստյանի, որը գործում է «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ -ը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Ասատուր Ասատրյանի, որը գործում է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2497659.9 (երկու միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր հիսունինը ՀՀ դրամ իննսուն լումա), ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

...վելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, ...քերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ

...ույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ ...ամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարարերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
Տավուշի մարզ,ք.Բերդ,Ա.Մանուկյան,25	ք. Երևան, Օհանովի փ.15/1
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ	Բանկ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2477800186580010	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 07806692	ՀՎՀՀ 01222567
տնօրենի ժ/պ՝ Ա. Գալստյան	գլխ.տնօրեն՝
/ստորագրություն/	/ստորագրություն/
L.S	

Հավելված
« 23 » մարտի 2021 թ. կնքվ
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/05-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետ**
1	33611150	Պանկրեատին (լիպազ, ամիլազ, պրոտեազ) - Մեգիմ Ֆորտե դրաժե 3500ՄՄ N 20	Մեգիմ Ֆորտե Բեռլին-Քեմի ԱԳ	Պանկրեատին (լիպազ, ամիլազ, պրոտեազ) pancreatin (lipase, amylase, protease դեղահատեր, թաղանթապատ (3500ԱՄ + 4200ԱՄ + 250ԱՄ)բլիստերում (20/1x20/, 40/2x20/,80/4x20/, 100/5x20/)	հատ	32,98	39576	1200	Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25	1200	2021թ-ի ընթացքում՝ յուրաքանչյուրանգամ պատվիրատուից պատվերն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապա
2	33691191	Էսենցիալ ֆոսֆոլիպիդներ – Էսֆոլ-Ն սրվակ 250մգ/5մլ N 5	Էսֆոլ-Ն Լիկվոր ՓԲԸ	Էսենցիալ ֆոսֆոլիպիդներ (essential phospholipids) լուծույթ ն/ե ներարկման 50մգ/մլ, 5մլ ապակե սրվակներ (5)	հատ	655,2	131040	200		200	
4	33611370	Թիամին ամպ. 5% 1 մլ N 10	Թիամին Երևանի Քիմամեղագործական Ֆիրմա ԲԲԸ	Թիամին (թիամինի քլորիդ)thiamine (thiamine chloide)լուծույթ մ/մ ներարկման 50մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	սրվ	18,9	4725	250		250	
5	33611390	Պիրիդոքսին ամպ. 5% 1 մլ N 10	Պիրիդոքսին Երևանի Քիմամեղագործական Ֆիրմա ԲԲԸ	Պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ) pyridoxine (pyridoxine hydro chloide) լուծույթ ե/մ, մ/մ և ն/ե ներարկման, 50մգ/մլ, 1մլ (10)	սրվ	17,01	8505	500		500	
6	33621240	Ցիանոկոբալամին ամպ 500 մկգ/մլ 1մլ N 10	Վիտամին Բ 12 Երևանի Քիմամեղագործական Ֆիրմա ԲԲԸ	Ցիանոկոբալամին cyanocobalamin, լուծույթ մ/մ կամ ե/մ ներարկման, 0,5 մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)	սրվ	18,9	1890	100		100	

7	33661125	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ - Սպազմալգոն ամպ. 2մլ N 10	Սպազմալգոն Սոֆարմա ԲԸ	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ, մ/մ ներարկման 500մգ/մլ + 2մգ/մլ + 0.02մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10/1x10/)	սրվ	191	21010	110		110	տան
10	33661159	Ֆենիլէֆրին(ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ)- Միդոպտիկ ակնակաթիլներ 2,5% 10մլ	Միդոպտիկ Լիկվոր ՓԲԸ	Ֆենիլէֆրին(ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ)- ակնակաթիլներ 25մգ/մլ, 10մլ պլաստիկե սրվակ-կաթոցիկ	հատ	2520	7560	3		3	
12	33691213	Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ Լինեքս դ/պ N 16	Լինեքս Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ.	լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ դեղապատիճներ, կոշտ 1,2x10^7, ապակե տարայում (16), բլիստերում (16/2x8/)	դ/պճ	147,88	207032	1400		1400	
18	33621360	Գլիցերին մոմիկ 2,11 գ N 10	Գլիցերին Նիժֆարմ ԲԸ	գլիցերոլ (glycerol) մոմիկներ, ուտիոդադիքային 2.11գ, (10/2x5/)	հատ	117,68	74138,4	630		630	
20	33661127	Մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) լուծույթ - Անալգին ամպ. 50% 2մլ N 10	Անալգին Երևանի Քիմամդեղագործական Ֆիրմա ԲԲԸ	մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) լուծույթ, մ/մ և ն/ե ներարկման 500մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	սրվ	38,5	254100	6600		6600	
22	33611240	Ածուխ ակտիվացված դ/հ 0.25գ N 10	Ածուխ ակտիվացված Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան	Ածուխ ակտիվացված, charcoal activated դեղահատեր 250մգ, ստրիպում (10)	հատ	2,13	5325	2500		2500	
23	33611341	Վիտամին B Կոմպլեկս ամպ.2մլ N 10	Վիտամին B Համալիր լուծույթ ներարկման համար Սոֆարմա ԲԸ	Թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին(ռիբոֆլավին նատրիումի ֆոսֆատ), պիրիդոքսին(պիրիդոքսինի հիդրոքլորիդ) Նիկոտինամիդ լուծույթ, ն/ե և մ/մ ներարկման 5մգ/մլ + 1մգ/մլ + 5մգ/մլ +50մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	սրվ	163,66	81830	500		500	
25	33611350	Ասկորբինաթթու ամպ. 5%, 2մլ N10	Ասկորբինաթթու Երևանի Քիմամդեղագործական Ֆիրմա ԲԲԸ	Ասկորբինաթթու, ascorbic acid լուծույթ ներարկման 5%, 2մլ ամպուլներ (10)	սրվ	25,25	88375	3500		3500	

27	33661115	Բուպիվակայինի հիդրոքլորիդ ամպ. 0.5% 5մգ/մլ 10մլ N10	Բուպիվակայինի հիդրոքլորիդ Վարշավայի դեղագործական գործարան «Պոլշա» Ս.Ա. Կարո	բուպիվակային (բուպիվակայինի հիդրոքլորիդ) bupivacaine (bupivacaine hydrochloride) լուծույթ, ներարկման, 5մգ/մլ, 10մլ ամպուլներ (10)	սրվ	754	75400	100		100
29	33661135	Միդազոլամ - Միդազոլամ Կալցեկս ամպ. 5մգ/մլ 3մլ №10	Միդազոլամ Կալցեքս	լուծույթ ներարկման5մգ/մլ, 3մլ ամպուլներ (10)	հատ	741	22230	30		30
32	33611420	Կալցիումի գլյուկոնատ 10% 5մլ №10	Կալցիումի գլյուկոնատ, Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ	Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate լուծույթ ներարկման 100մգ/մլ, 5մլ ամպուլներ, բլիստերում(10, 10/2x5/)	սրվ	51.45	16464	320		320
33	33691176	Բիսակոդիլ մումիկ 10մգ №10	Բիսակոդիլ Լեկխիմ-Խարկով ԲԸ	բիսակոդիլ (bisacodyl) մումիկներ, ուղիղաղիքային 10մգ, բլիստերում (10/2x5/)	հատ	56	19600	350		350
34	33691176	Թեոֆիլին 350մգ - Թեոտարդ դ/պ 350մգ №40	Թեոտարդ ԿՈԿԱ դ.դ.	թեոֆիլին theophylline դեղապատիճներ կարգավորվող ձերբազատմամբ 350մգ, բլիստերում (40/4x10/)	դ/պճ	56.2	56200	1000		1000
35	33691176	Մագնեզիումի լակտատի դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ - Մագնետաբ դ/հ 334մգ/5մգ №50	Մագնետաբ Ռուբիկոն	մագնեզիումի լակտատ դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ դեղահատեր թաղանթապատ 334մգ+5մգ (50/5x10/)	դ/հ	55.76	5576	100		100
36	33691270	Սալմետերոլ 50/250 - Սերետայդ Դիսկաս 50/250մկգ 60 դ/չափ	Սերետայդ Անուռալեր Գլաքսո Ուելքոմ	սալմետերոլ (սալմետերոլի քսինաֆոատ), ֆլուտիկազոն (ֆլուտիկազոնի պրոպիոնատ) salmeterol (salmeterol xinafoate), fluticasone (fluticasone propionate)դեղափոշի շնչառման50մկգ+250մկգ, շնչառման պլաստիկե սկավառակ (60 դեղաչափ)	հատ	13776.36	275527.2	20		20
39	33621100	Հեպարին(հեպարինի նատրիում),բենզոկայ ին,բենզիլ նիկոտինատ քսուք Հեպարին քսուք 25գ	Հեպարին Նիժֆարմ ԲԲԸ	հեպարին (հեպարին նատրիում), բենզոկային, բենզիլ նիկոտինատheparin (heparin sodium), benzocaine, benzyl nicotinatեքսուք արտաքին կիրառման100ՄՄ/գ+40մգ/գ+ 0.8մգ/գ,25գ ալյումինե կամ պլաստիկե պարկուճ	հատ	654.75	6547.5	10		10

49	33691210	Ստրոֆանտին Գ ամպ. 0,0025% 1մլ №10	Ստրոֆանտին Գ Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ	Ստրոֆանթին Կ strophanthin K լուծույթ ներարկման 0,25մգ/մլ, 1մլ ամպուլ	սրվ	50.15	15546,5	310		310	
52	33621270	Լևոմենթոլի լուծույթ մեթիլիզովալերիատում - Վալիդոլ դ/h 60մգ №10	Վալիդոլ Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ	մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում menthol solution in menthyl isovaleratեդեղահատեր ենթալեզվային60մգ,բլիստերում (6, 10)	դ/h	8.9	4450	500		500	
56	33621290	Էպինեֆրին (ադրենալին) 0.18% 1.0- Ադրենալինի հիդրոքլորիդ ամպ. 0.18% №10	Ադրենալին Դարնիցա	էպինեֆրին (էպինեֆրինի հիդրոտարտրատ) լուծույթ ներարկման 1,82մգ/մլ, 1մլ ամպուլներ (5) և 1մլ ամպուլներ բլիստերում (10, 5, (10/1x10/, 10/2x5/)	սրվ	69	34500	500		500	
57	33621360	Նիտրոգլիցերին դ/h 0,5մգ №40	Նիտրոգլիցերին Տեխնոլոգ ՄԲԸ	նիտրոգլիցերինnitroglycerinդեղահատեր ենթալեզվային0.5մգ,պլաստիկե տարայում (40)	դ/h	8.98	2694	300		300	
58	33621360	Նիտրոգլիցերին լուծույթ սրվ. 10մգ/մլ 2մլ №10	Նիտրոգլիցերին Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ	նիտրոգլիցերին nitroglycerinխտանյութ կաթիլաներարկ-ման լուծույթի10մգ/մլ, 2մլ ամպուլներ	սրվ	241.04	69901,6	290		290	
62	33621400	Դոպամին - Դոպամին ամպ. 40մգ/մլ 5մլ №10	Դոպամին Բիոքիմիկ	Դոպամին 40մգ/մլ 5մլ	սրվ	207.38	29033,2	140		140	
63	33661147	Նեոստիգմին - Պրոզերին ամպ. 0,05% 1մլ №10	Պրոզերին-Դարնիցա Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ	նեոստիգմին (նեոստիգմինի մեթիլսուլֆատ) neostigmine (neostigmine methylsulfate)լուծույթ ներարկման0,5մգ/մլ,1մլ ամպուլներ, բլիստերում (10, 10/2x5/)	սրվ	40.42	2021	50		50	
64	33621440	Բենդազոլ - Դիբազոլ ամպ. 1% 1մլ №10	Դիբազոլ Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ	բենդազոլ bendazolլուծույթ մ/մ ներարկման10մգ/մլ, 1մլ ամպուլներ(10)	սրվ	25.2	75600	3000		3000	
65	33621460	Պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին),ամլոդիպին (ամլոդիպին-բեզիլատ)- Պրեստանս դ/h 10մգ/10մգ №30	Պրեստանս 10մգ/10մգ Սերվիե (Իռլանդիա) Ինդաստրիես ՍՊԸ	պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին), ամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ) perindopril (perindopril arginine), amlodipine (amlodipine besilate)դեղահատեր10մգ+10մգ,պլաստիկե տարայում (30)	դ/h	207	227700	1100		1100	
68	33621542	Պապավերին մոմիկ 0,02գ №10	Պապավերին Նիժֆարմ ԲԸ	պապավերին (պապավերինի հիդրոքլորիդ) papaverine (papaverine hydrochloride) մոմիկներ ուղիղաղիքային 20մգ,	մոմիկ	64.4	3220	50		50	

72	33621340	Կոֆեին-նատրիումի բենզոատ ամպ. 20% 1մլ №10	Կոֆեին-նատրիումի բենզոատ Երևանի Քիմիադեղագործա կան ֆիրմա ԲԲԸ	կոֆեին նատրիումի բենզոատcaffeine-sodium benzoateլուծույթ ներարկման200մգ/մլ,1մլ ամպուլներ(10)	սրվ	37.8	6804	180		180
90	33642210	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ - Մեթիպրեդ դ/հ 4մգ №30	Մեթիպրեդ Օրիոն Քորպորեյշն	մեթիլպրեդնիզոլոն methylprednisolone դեղահատեր4մգ, պլաստիկե տարայում (30)	դ/հ	60.5	18150	300		300
92	33651110	Ամպիցիլին սրվ. ն/ե մ/մ 1գ	Ամպիցիլին Կինմեդպրեպարա տ	ամպիցիլին (ամպիցիլին նատրիում) դեղափոշի ներարկման լուծույթի 1000մգ,ապակե սրվակ	սրվ	159	71550	450		450
94	33651116	Ցեֆազոլին ն/ե և մ/մ սրվ.1գ	Ցեֆազոլին "Բորիսովյան բուժպատրաստուկն երի գործարան" ԲԲԸ	ցեֆազոլին (ցեֆազոլինի նատրիում) cefazolin (cefazolin sodium)դեղափոշի ներարկման լուծույթի1000մգ,ապակե սրվակ (1, 10)	սրվ	197	226550	1150		1150
96	33651123	Ցեֆոտաքսիմ - Ցեֆոտաքսիմ սրվ. ն/ե. մ/մ 1գ №1	Ցեֆոտաքսիմ Ռուզֆարմ	ցեֆոտաքսիմ 1 գ	սրվ	192	48000	250		250
97	33661126	Գենտամիցին ամպ. 4% 80մգ/2մլ №10	Գենտամիցին- Զդորովյե Զդորովյե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ	գենտամիցին (գենտամիցինի սուլֆատ)gentamicin (gentamicin sulfate)լուծույթ ներարկման40մգ/մլ,2մլ ամպուլներ բլիստերում(10, 10/2x5/, 10/1x10/)	սրվ	73.29	47638,5	650		650
106	33651150	Ֆլուկոնազոլ 150մգ Ֆլուկո դ/պ 150մգ №10	Ֆլուկո Թուֆեննյի Գրուպ ՍՊԸ	Ֆլուկոնազոլ 150մգ, բլիստերում (10/1x10/)	դ/պ	59	32450	550		550
109	33661110	Իզոֆլուրան - Անեսթերան 99,9% 100մլ	Անեսթերան Էս.Սի.Ռոմֆարմ Քոմպան	իզոֆլուրան լուծույթ շնչառման 100մլ ապակե շշիկ	ֆլակ	11200	168000	15		15
110	33661113	Թիոպենտալ նատրիում սրվ. 0,5գ	Թիոպենտալ Կինմեդպրեպա- ռատ ՀԲԸ	թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium)դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի500մգ, ապակե սրվակ (40)	ֆլակ	2240	11200	5		5
		Ընդամենը					2497659,9			

*** Հանձնելու պահին ապրանքի մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:**

** Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ ՎԱՃԱՌՈՂ

«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Տավուշի մարզ,ք.Բերդ,Ա.Մանուկյան,25
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477800186580010
ՀՎՀՀ 07806692
տնօրենի ժ/պ Ա. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Օհանովի փ 15/1
Բանկ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
գլխ.տնօրեն Ա. Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
« 23 » մարտի 2021 թ. կնքվա
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/05-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33611150	Պանկրեատին (լիպազ. ամիլազ. պրոտեազ) - Մեգիմ - Ֆորտե կամ համարժեք												39576	39576
2	33691191	Էսենցիալ ֆոսֆոլիպիդներ -Էսենցիալե Հ 5մլ կամ համարժեք սրվ. 250մգ/5մլ 5մլ												131040	131040
4	33611370	Թիամին ամպ. 5% 1 մլ/Վիտամին Բ 1/												4725	4725
5	33611390	Պիրիդոքսին ամպ. 5% 1 մլ /Վիտամին Բ 6/												8505	8505
6	33621240	Ցիանոկոբալամին ամպ 0.5 մգ/մլ /Վիտամին Բ 12/												1890	1890
7	33661125	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ -Սպազմալգոն 2մլ կամ համարժեք												21010	21010
10	33661159	Ֆենիլէֆրին(ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ)-Միդոպտիկ կամ համարժեք 10մլ ակնակաթիլներ												7560	7560
12	33691213	Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ Լինեքս կամ համարժեք												207032	207032
18	33621360	Գլիցերին մոմիկ 2.11 գ												74138,4	74138,4
20	33661127	Մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) լուծույթ - Անալգին 50% 2մլ կամ համարժեք												254100	254100

22	33611240	Ածուխ ակտիվացված դ/հ 0.25գ												5325	5325
23	33611341	Վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ լուծույթ - Վիտամին Բ կոմպլեկս ամպ.2մլ												81830	81830
25	33611350	Ասկորբինաթթու ամպ.50 մգ/մլ, 2մլ												88375	88375
27	33661115	Բուպիվակային հիդրոքլորիդ 0.5% 5մգ 10մլ												75400	75400
29	33661135	Միդազոլամ - Միդազեմ 5մգ/մլ 3մլ կամ համարժեք												22230	22230
32	33611420	Կալցիումի գլյուկոնատ 10% 5մլ												16464	16464
33	33691176	Բիսակոդիլ մոմիկ 10մգ												19600	19600
34	33691176	Թեոֆիլին 350մգ - Տեոտարդ 350մգ կամ համարժեք												56200	56200
35	33691176	Մագնեզիումի լակտատի դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ - Մագնե B6 կամ համարժեք												5576	5576
36	33691270	Սալմետերոլ 50/250 - Սերետայդ 50/250 կամ համարժեք												275527,2	275527,2
39	33621100	Հեպարին(հեպարինի նատրիում),բենզոկային,բենզիլ նիկոտինատ քսուք 25գ												6547,5	6547,5
49	33691210	Ստրոֆանթին Կ 0.025 % 1մլ												15546,5	15546,5
52	33621270	Լևոմենթոլի լուծույթ մեթիլիզովալերիատում - Վալիդոլ 60մգ կամ համարժեք												4450	4450
56	33621290	Էպինեֆրին (ադրենալին) 0.18% 1.0												34500	34500
57	33621360	Նիտրոգլիցերին 0.5մգ												2694	2694
58	33621360	Նիտրոգլիցերին 5 մգ/մլ 2մլ												69901,6	69901,6
62	33621400	Դոպամին - Դոպմին ամպ. 40մգ/1մլ 5մլ կամ համարժեք												29033,2	29033,2
63	33661147	Նեոստիգմին - Պրոզերին 0.05% 1մլ կամ համարժեք												2021	2021
64	33621440	Բենդազոլ - Դիբազոլ 1% 1մլ կամ համարժեք												75600	75600
65	33621460	Պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին), ամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ)- Պրեստանս 10մգ/10մգ կամ համարժեք												227700	227700

68	33621542	Պապավերին մոմիկ 0.02գ													3220	3220
72	33621340	Կոֆեին նատրիումի բենզոատ 20 % 1մլ													6804	6804
90	33642210	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ - Մեդրոլ դ/հ 4 մգ կամ համարժեք													18150	18150
92	33651110	Ամպիցիլին սրվ. մ/ե մ/մ 1գ													71550	71550
94	33651116	Ցեֆազոլին ն/ե և մ/մ սրվ.1գ													226550	226550
96	33651123	Ցեֆոտաքսիմ – Կլաֆորան 1 գ համարժեք Բիոտակսիմ ն/ե և մ/մ սրվ. 1գ կամ համարժեք													48000	48000
97	33661126	Գենտամիցին 40մգ/մլ, 2մլ													47638,5	47638,5
106	33651150	Ցլուկոնատ 150մգ													32450	32450
109	33661110	Իզոֆլուրան - Անեսթերան 99,9% 100մլ/ կամ համարժեք													168000	168000
110	33661113	Թիոպենտալ 500մգ-ոց դ/փոշի													11200	11200

* ***Ապրանքի դիմաց վճարումները կկատարվեն՝ ըստ մատակարարման՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:***

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախաւրեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

** *հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Տավուշի մարզ,ք.Բերդ,Ա.Մանուկյան,25
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 24778000186580010
ՀՎՀՀ 07806692
տնօրենի ժ/պ՝ Ա. Գալստյան

/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Օհանովի փ 15/1
Բանկ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
գլխ.տնօրեն՝ Ա. Ասատրյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
« 23 » մարտի 2021 թ. կնքված
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/05-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ
գտնվելու վայրը Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա Մանուկյան,25
հհ 2477800186580010
հվհհ 07806692

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 23 » մարտի 2021 թ. կնքված
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/05-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ -ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն